

Մերի Դաշնագիրը և Հայկական հարցը



Այս համարում

Հայերեն բաժին

- 1- Իմբրագրական.....0
- 2- Հայաստանի Հանրապետություն.....3
- 3- Արևմտյան Հայաստան.....7
- 4- Սփյուռք.....13
- 5- Միջազգային.....15
- 6- Մշակույթ.....18

Պարսկերեն բաժին

Արցախի պատմություն.....0-2

Շապիկի առաջին էջում՝ Սևրի դաշնագիրը

Վերջին էջում՝ Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 226, Օգոստոս 2017 No. 226, August 2017

ماهنامه لويس - شماره ۲۲۶ شهریور ماه ۱۳۹۶

Մշակութային և Հասարակական Ամսագիր

ԼՈՒՅՍ

Արտոնատեր ԵՆ գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան
Իմբրագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան

Թամ Ղարախանյան, Վաչիկ Վարդանյան

Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան,

Սաթենիկ Ավետիսյան, Անդրանիկ Խեչումյան

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Edic Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **Baruyr Baghdasarian**

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են

չհամընկնել խմբագրության տեսակետներին:

Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին

պարտադիր է:

ماهنامه لويس

صاحب امتیاز ، مدیر مسئول و سردبیر: ادیک باغداساریان

نشانی نشریه : تهران صندوق پستی ۱۵۸۷۵-۹۴۸۸

پست الکترونیکی: **louys_monthly@yahoo.com**

نشانی اینترنت: www.louysonline.com

ԵՎՐԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ 10 օգոստոսի 1920



Մեկ կողմից՝ Բրիտանական կայսրությունը, Ֆրանսիան, Իտալիան և Ճապոնիան, որոնք սույն պայմանագրում նշված են որպես Գլխավոր դաշնակից տերություններ, Հայաստանը, Բեղգիան, Հունաստանը, Հեջաըրը, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան, Սերբա-Խորվաթա-Սլովենական պետությունը և Չեխոսլովակիան, որոնք վերոհիշյալ գլխավոր տերությունների հետ կազմավորում են դաշնակից տերություններ, և մյուս կողմից՝ Թուրքիան, Նկատի առնելով, որ Օսմանական կայսերական կառավարության խնդրանքով գլխավոր դաշնակից տերությունները 1918թ. հոկտեմբերի 30-ին Թուրքիային տվել են զինադադար, որպեսզի հնարավոր դառնա Հաշտության պայմանագրի կնքումը.


Նկատի առնելով որ դաշնակից տերությունները հավասար չափով են ցանկանում, որպեսզի հաստատուն և տևական խաղաղությամբ փոխարինվի Թուրքիայի դեմ պատերազմը, որի մեջ նրանցից մի քանիսը հաջորդաբար ուղղակի կամ անուղղակի են ներգրավվել և որի սկզբնապատճառը եղել է 1914թ. հուլիսի 28-ին նախկին Սերբիայի Կայսերական և Արքայական Ավստրո-Հունգարական կառավարության կողմից պատերազմի հայտարարումն ընդդեմ Թուրքիայի և 1914 թ. հոկտեմբերի 29-ին դաշնակից տերությունների դեմ Թուրքիայի սկսած և Թուրքիայի դաշնակից Գերմանիայի կողմից ղեկավարվող թշնամական գործողությունները: Այս նպատակով բարձր պայմանավորվող կողմերը որպես իրենց լիազորներ նշանակեցին՝

Մեծ Բրիտանիայի, Իռլանդիայի և Անդրծովյան տիրապետությունների միացյալ թագավորության նորին մեծություն արքան, Հնդկաստանի կայսրը՝ Վիկտորիայի շրջանի կոմանդոր, Փարիզում նորին բրիտանական մեծության լիազոր մինիստր սըր Ջորջ Դիքսոն Գրեհեմին,

Եվ

Կանադայի դոմինիոնի կողմից՝

Միխայիլի և Գեորգիի շքանշանի կոմանդոր, Միացյալ թագավորությունում Կանադայի Գերագույն կոմիսար պատվարժան սեր Ջորջ Խոլթես Պեռլեին.





ՍԵՎՐԻ
ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ
10 օգոստոսի 1920



Ավստրալիական Կոմունիստի կողմից՝ Միացյալ թագավորությունում Ավստրալիայի Գերագույն կոմիսար հարգարժան պ-րն Էնդրյու Ֆիշերին. Նոր Չեխոսլովակիայի դոմինիոնի կողմից՝ Բրիտանական Կայսրության շքանշանի ասպետ, Միացյալ թագավորությունում Հարավ-Աֆրիկական գերագույն կոմիսարի պարտականությունները կատարող պ-րն Ռեջինալդ Էնդրյու Բլանկենբերգին. Հնդկաստանի կողմից՝ Հնդկաստանի գործերի պետական քարտուղարի օգնականի սատարող սըր Արթուր Չիքսթին. Ֆրանսիական հանրապետության պրեզիդենտը՝ Մինիստրների խորհրդի նախագահ, Արտաքին գործերի մինիստր Ալեքսանդր Միլերանին, Ֆինլանդների մինիստր պ-րն Ֆրեդերիկ-Ֆրանսուա Մարսելին. Ֆրանսիայի դեսպան պ-րն Ժորժ Մորիս Պալեոլոգին. Իտալիայի Նորին մեծություն թագավորը՝ Թագավորության սենատոր, Փարիզում Իտալիայի ն.մ. թագավորի լիազոր դեսպան կոմս Լեյիո Բոնին Լոնգարին. Բարձրագույն ռազմական խորհրդում իտալական զինվորական ներկայացուցիչ գեներալ Ջիովաննի Մարիետտին. Ճապոնիայի Նորին մեծության կայսրը՝ Լոնդոնում ճապոնիայի ն.մ. կայսրի արտակարգ և լիազոր դեսպան, վիկոնտ Շինդին. Փարիզում ճապոնիայի ն.մ. կայսրի արտակարգ և լիազոր դեսպան պ-րն Կ. Մացուին. Հայաստանը՝ Հայկական Հանրապետության պատվիրակության նախագահ պ-րն Ավետիս Ահարոնյանին. Բելգիացիների Նորին մեծության թագավորը՝ Արտակարգ դեսպանորդ և լիազոր մինիստր, պետական մինիստր պ-րն Ժյուլ Վան-դեն-Յեյվելին. Միջազգային անձնական իրավունքի ինստիտուտի անդամ, բելգիական պատվիրակության գլխավոր քարտուղար պ-րն Ռոլեն Ժեքմենին. Հելլենների Նորին մեծության թագավորը՝ Մինիստրների խորհրդի նախագահ պ-րն Ելեֆթերիա Կ. Վենիզելոսին. Փարիզում հելլենների ն.մ. թագավորի արտակարգ դեսպանորդ և լիազոր մինիստր պ-րն Աթոս Ռոմանոսին. Հեջասի Նորին մեծության թագավորը՝ Լեհական Հանրապետության պրեզիդենտը՝ Փարիզում Լեհական Հանրապետության արտակարգ դեսպանորդ և լիազոր մինիստր կոմս Մավրիկի Չամյսկուն.

պ-րն Էրազմ Պիցին. Պորտուգալական Հանրապետության պրեզիդենտը՝ Մինիստրների խորհրդի նախկին նախագահ դոկտոր Ալֆոնսո դը Կոստային. Ռումինիայի Նորին մեծության թագավորը՝ Ֆինլանդների մինիստր պ-րն Նիկոլայ Տիտուլեսկուն. Փարիզում Ռումինիայի ն.մ. թագավորի արտակարգ դեսպանորդ և լիազոր մինիստր իշխան Դմիտրի Գիկին. Սերբերի, խորվատների և սլովենների Նորին մեծության թագավորը՝ Մինիստրների խորհրդի նախկին նախագահ պ-րն Նիկոլայ Պ. Պաշիչին. Արտաքին գործերի մինիստր պ-րն Աստե Տրումբիչին. Չեխոսլովակյան Հանրապետության պրեզիդենտը՝ Արտաքին գործերի մինիստր պ-րն Էդուարդ Բենեշին. Լոնդոնում Չեխոսլովակյան Հանրապետության արտակարգ դեսպանորդ և լիազոր մինիստր պ-րն Ստեֆան Օսուսկուն. Թուրքիան՝ Սենատոր, գեներալ Հաադի փաշային. Սենատոր Ռիզա Թևֆիկ բեյին. Բեռնում Թուրքիայի արտակարգ դեսպանորդ և լիազոր մինիստր Ռեշադ Խալիսո բեյին, Ռոնսը, իրենց լիազորագրերը փոխանակելով, դրանք գտան անբասիր և պատշաճ ձևի ու համաձայնվեցին հետևյալ որոշումների շուրջ. Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից կավարտվի պատերազմի վիճակը: Այդ պահից և սույն պայմանագրի որոշումների պահպանմամբ, դաշնակից տերությունների միջև գոյություն կունենան պաշտոնական հարաբերություններ:

**Մաս 3-րդ
ԶԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Բաժին 6-րդ
ՀԱՅԱՍՏԱՆ**

Հոդված 88. Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը, ինչպես այդ բանն արդեն արել են Դաշնակից տերությունները, որպես ազատ և անկախ պետություն:
Հոդված 89. Թուրքիան և Հայաստանը, ինչպես և Բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնվում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանատու մը թողնել Ամերիկայի Միացյալ Նահանգների որոշմանը և ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես և այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու և հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տերիտորիաների ապառազմականացման վերաբերյալ:
Հոդված 90. Այն դեպքում, եթե 89-րդ հոդվածի համաձայն սահմանագիծը որոշելիս վիլայեթների ամբողջ տերիտորիան կամ նրա մասը հանձնվի Հայաստանին, Թուրքիան այսօր արդեն հայտարարում է, որ որոշման օրից սկսած ինքը իրաժարվում է հանձնված տերիտորիայի նկատմամբ բոլոր իրավունքներից և իրավահիմունքներից: Սույն պայմանագրի որոշումները, որոնք կիրառվելու են Թուրքիայից անջատվող տերիտորիաների նկատմամբ, այս պահից սկսած կգործադրվեն նաև այդ տերիտորիայի նկատմամբ: Հայաստանի սուվերենությանը հանձնվող տերիտորիայի կապակցությամբ նրա վրա դրվող Թուրքիայի ֆինանսական պարտավորությունների բաժինը, և դրանք բնույթի ու այն իրավունքները, որոնցով նա կարող է վաճառարկել, կսահմանվեն սույն Պայմանագրի 8-րդ մասի (ֆինանսական դրույթներ) 241-244-րդ հոդվածների համաձայն: Հաջորդ կոնվենցիաները կկարգավորվեն, եթե դա անհրաժեշտ լինի, այն բոլոր հարցերը, որոնք չեն կարգավորվել սույն Պայմանագրով և որոնք կարող են ծնունդ առնել հիշյալ տերիտորիայի փոխանցման կապակցությամբ:
Հոդված 91. Եթե 89-րդ հոդվածում նշված տերիտորիայի մի

մասը հանձնվի Հայաստանին, ապա Սահմանագծման հանձնաժողով, որի կազմը կորոշվի հետագայում կատեղծվի երեք ամսվա ընթացքում այն բանից հետո, երբ արդեն ընդունված կլինի Հայաստանի և Թուրքիայի միջև տեղում սահմանագիծ անցկացնելու վերաբերյալ հիշյալ հոդվածում նախատեսվող որոշումը:

Հոդված 92. Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմաններն ըստ պատկանելույն կորոշվեն շահագրգռված պետությունների ընդհանուր համաձայնությամբ: Երբ 89-րդ հոդվածում նախատեսված որոշումն արդեն ընդունված կլինի և դրանից հետո այս կամ այն շահագրգռված պետությունները չեն կարողանա ընդհանուր համաձայնությամբ որոշել իրենց սահմանագիծը, վերջինս կորոշեն Գլխավոր դաշնակից տերությունները, որոնք դրա հետ միասին պետք է հոգ տանեն սահմանագատումը տեղում գծանշելու մասին:

Հոդված 93. Հայաստանն ընդունում է, համաձայնվելով դրանք մտցնել Գլխավոր տերությունների հետ պայմանագրի մեջ, այն որոշումները, որոնք այդ Տերություններն անհրաժեշտ կհամարեն Հայաստանում այն բնակիչների շահերը պաշտպանելու համար, որոնք ռասայի, լեզվի և կրոնի առումով տարբերվում են ազգաբնակչության մեծամասնությունից: Հայաստանը նմանապես համաձայնվում է Գլխավոր տերությունների հետ Պայմանագրի մեջ մտցնել այն որոշումները, որոնք այդ տերություններն անհրաժեշտ կհամարեն տրանզիտի ազատությունը և այլ ազգերի առևտրի համար արդարացի պայմանակարգը պաշտպանելու համար:

Քաժին 12-րդ

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

Հոդված 125. Տասնութից բարձր տարիք ունեցող այն անձինք, որոնք սույն Պայմանագրի համապատասխան բնակություն են հաստատել Թուրքիայից անջատված տերիտորիայում, և որոնք ռասայի առումով տարբերվում են ազգաբնակչության մեծամասնությունից, սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո միայն ժամանակամիջոցում կարող են քաղաքացիություն ընտրել հոգու շայն Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Հունաստանի, Ռեչուսի, Միջագետի, Սիրիայի, Բուլղարիայի կամ Թուրքիայի, եթե այն պետության ազգաբնակչության մեծամասնությունը, որի օգտին կատարվում է քաղաքացիության ընտրությունը, պատկանում է սույն ռասային, ինչ և քաղաքացիության ընտրության իրավունքը կենսագործող անձը:

Մասն 4-րդ

ՓՈՋՐԱՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդված 142. Նկատի առնելով, որ 1914 թվականի նոյեմբերի 1-ից հետո Թուրքիայում գոյություն ունեցող տեռորիստական ռեժիմի պատճառով չէին կարող Նորմալ կարգով տեղի ունենալ քրիստոնյաների դավանափոխություններ, այդ ամսաթվից հետո կատարված դավանափոխությունները չեն ընդունվում, և այն բոլոր անձինք, ովքեր մինչև 1914 թվականի նոյեմբերի 1-ը չեն եղել մուսուլման, կոիտվեն որպես ոչ մուսուլմաններ, եթե միայն նրանք վերականգնելով իրենց ազատությունը, իրենց սեփական կամքով չեն կատարի այն բոլոր ձևականությունները, որոնք անհրաժեշտ են իսլամն ընդունելու համար:

Պատերազմի ժամանակ Թուրքիայում մարդկանց նկատմամբ կատարված վայրագությունների պատճառած չարիքն առավելագույն չափով քակելու համար օսմանյան կառավարությունը պարտավորվում է իր և օսմանյան իշխանությունների կողմից ցույց տալ ամեն տեսակ աջակցություն՝ 1914թ, նոյեմբերի 1-ից հետո անհետացած, առևանգված, ներկայված և ազատագրված ամեն ռասայի և ամեն կրոնի մարդկանց որոնելու և ազատելու համար: Տուժվածների՝ իրենց, նրանց ընտանիքների և նրանց մերձավորների բողոքներն ընդունելու, անհրաժեշտ հետաքննություններ կատարելու և վերջնական ձևով

վերոհիշյալ անձանց ազատելու մասին որոշումներ հանելու գործում օսմանյան կառավարությունը պարտավորվում է ոչուրացնել Ազգերի լիգայի խորհրդի կողմից նշանակվելիք խառն հանձնաժողովների գործողությունները:

Օսմանյան կառավարությունը պարտավորվում է հարկադրել, որ հարգվեն այդ հանձնաժողովների որոշումները և ապահովվեն այս ձևով իրենց բոլոր իրավունքները վերականգնված անձանց անվտանգությունը և ազատությունը:

Հոդված 144. Օսմանյան կառավարությունը ընդունում է լքված սեփականության (Emval-i Metpune) վերաբերյալ 1915 թվականի օրենքի, ինչպես նաև այդ օրենքի լրացումների անհրաժեշտությունը, և հայտարարում է դրանք վերացված և ուժը կորցրած ինչպես անցյալում, նույնպես և ապագայում:

Օսմանյան կառավարությունը հանդիսավոր կերպով պարտավորվում է հնարավորության սահմաններում նպաստել, որպեսզի իրենց օջախները վերադառնան և իրենց գործերը վերսկսեն օսմանյան այլազգի այն քաղաքացիները, որոնք 1914թ. հունվարի 1-ից հետո գաղթել են զազանությունների հանդեպ ունեցած վախից դրոշմ, կամ արտաքսվել են բռնադատման որևէ այլ եղանակով: Օսմանյան կառավարությունն ընդունում է, որ օսմանյան հիշյալ քաղաքացիներին կամ նրանց համայնքներին պատկանող այն անշարժ և շարժական գույքերը, որոնք կարող են որոնելով գտնվել, ում ձեռքում էլ դրանք լինեն, պետք է որքան հնարավոր է շուտ վերադարձվեն (իրենց տերերին): Գույքերը վերադարձվելիս ազատ են լինելու որևէ պարտիքներից և սերվիտուտներից, որոնցով նրանք կարող էին ծանրաբեռնված լինել, և վերադարձվեն առանց որևէ հատուցման այժմյան սեփականատերերին կամ գործածողներին, բայց այնպիսի հայցերի պայմանով, որոնք այս վերջինները կարող են հարուցել նրանց դեմ, ումից նրանք այդպիսիք ստացել են:

Օսմանյան կառավարությունը համաձայնվում է այն բանին, որպեսզի Ազգերի լիգայի խորհուրդը միջնորդ հանձնաժողովներ նշանակի բոլոր այն վայրերում, որտեղ դա կհամարվի անհրաժեշտ: Այդ հանձնաժողովներից յուրաքանչյուրը կազմված կլինի օսմանյան կառավարության մեկ ներկայացուցչից, այն համայնքի մեկ ներկայացուցչից, որն իրեն համարում է տուժված կամ որի անդամը իրեն համարում է տուժված, և Ազգերի լիգայի խորհրդի նշանակած նախագահից: Միջնորդ հանձնաժողովները կվարեն այն բոլոր հարցերը, որոնք նշված են սույն հոդվածում, և դրանք կլուծեն արագընթաց վարույթի կարգով:

Հիշյալ միջնորդ հանձնաժողովները օժտված կլինեն հետևյալ իրավունքներով տալու իշխանությամբ.

1. անհրաժեշտ համարված ամեն տեսակ վերակառուցումների և վերականգնումների համար օսմանյան կառավարության կողմից բանվորական ուժ մատակարարելու մասին: Այդ բանվորական ուժը կհավաքագրվի այն տերիտորիաներում ապրող ազգությանը պատկանող մարդկանցից, որտեղ միջնորդ հանձնաժողովը անհրաժեշտ է համարում հիշյալ աշխատանքների համարումը:

2. այն բոլոր անձանց մեկուսացումը, որոնք հետաքննությունից հետո կճանաչվեն որպես վայրագությունների կամ տեղահանությունների ակտիվ մասնակիցներ, կամ թե դրանց հարուցողներ. հանձնաժողովը կիրահանվի. թե այդ անձանց գույքի նկատմամբ ինչ միջոցներ պետք է ձեռք առնվեն:

3. 1914թ. հունվարի 1-ից հետո համայնքի՝ մահացած կամ անհետացած անդամներին պատկանած բոլոր գույքերի և ամեն տեսակ սեփականության վերադարձման մասին, ընդ որում այդ գույքերը և սեփականությունը պետության փոխարեն, կարող են վերադարձվել համայնքին:

4. 1914թ. հունվարի 1-ից հետո անշարժ սեփականության վաճառման կամ նրա նկատմամբ սեփականատիրական իրավունքների հաստատման ակտերը չեղյալ հայտարարելու մասին. այդ անշարժ գույքերի (այժմյան) տերերին վարձահատուցելու պարտականությունն ընկած կլինի

օսմանյան կառավարության վրա, և առիթ չի հանդիսանա իրավունքների վերականգնումն ուշացնելու համար: Միջևորդ հանձնաժողովը, սակայն, կունենա շահագրգռված կողմերի միջև արդարացի համաձայնություններ հաստատելու իրավունք, եթե խնդրո առարկա սեփականության այժմյան տերը վճարել է որևէ գումար:

Օսմանյան կառավարությունը պարտավորվում է հնարավորության սահմաններում դյուրացնել հանձնաժողովի աշխատանքը և ապահովել նրանց որոշումների կատարումը, որոշումներ, որոնք կլինեն անբողոքարկելի: Այդ որոշումներին չի կարող հակադրվել օսմանյան դատական կամ վարչական իշխանությունների ոչ մի որոշում:

Մասն 9-րդ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Բաժին 2-րդ

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ

Հոդված 277. Թուրքիան ընդունում է, որ վերացված են և վերացված են մնում մինչև 1914թ. օգոստոսի 1-ը կամ այդ օրից հետո և մինչև Ռուսաստանի կամ Նախկինում Ռուսաստանի տերիտորիայի մի մասը կազմող զանազան պետությունների և կառավարությունների հետ, սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը, ինչպես նաև Ռուսիայի հետ 1916թ. օգոստոսի 15-ից հետո և մինչև սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը կնքված բոլոր պայմանագրերը, կոնվենցիաները կամ համաձայնագրերը:

Մասն 11-րդ

ՆԱԿԱՅԱՆԳԻՍՆԵՐ, ԶՐԱՅԻՆ ՈՒՂԻՆԵՐ ԵՎ ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐ

Բաժին 2-րդ

ՆԱԿԱԳԱՆՏՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 4-րդ

ԴՐՈՒՅԹՆԵՐ, ՈՐՈՆՔ ՃԱՆԱՉՈՒՄ ԵՆ ՈՐՈՇ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅ ՈՐՈՇ ՆԱԿԱՅԱՆԳԻՍՆԵՐԻ ՕՏԱԳՈՐԾՄԱՆ (ԻՐԱՎՈՒՆՔԸ)

Հոդված 349. Թուրքիայի համար դեպի Միջերկրական ծովը և Եգեյան ծովը ազատ մուտք ապահովելու նպատակով նրան տրվում է տրանզիտի ազատություն Թուրքիայից անջատված տերիտորիաներում և նավահանգիստներում:

Տրանզիտի ազատություն հանդիսանում է այն, ինչ սահմանված է (սույն Պայմանագրի) 328-րդ հոդվածում. քանի դեռ այդ առթիվ կնքված չի լինի ընդհանուր (համընդհանուր) կոնվենցիա, որից հետո այդ ազատությունը կփոխարինվի նոր կոնվենցիայի որոշումներով:

Շահագրգռված պետությունների կամ վարչությունների միջև (կնքվելից) կոնվենցիաները՝ ֆինանսական հանձնաժողովի համաձայնությամբ կսահմանեն, որչափ որ դա վերաբերում է Թուրքիային, վերը տրված իրավունքի կենսագործման պայմանները և մասնավոր կկարգավորեն նավահանգիստների և նրանցում գոյություն ունեցող ազատ գոտիների օգտագործման եղանակը, միջազգային ծառայությունների և ուղիղ տոմսերին ու բեռնագրերին վերաբերող տարիքների սահմանումը, նաև Բեռնի՝ 1890թ. հոկտեմբերի 14-ի կոնվենցիայի որոշումների և լրացուցիչ որոշումների կիրառումը, մինչև վերոհիշյալի փոխարինումը նոր կոնվենցիայով:

Տրանզիտի ազատությունը կտարածվի փոստային, հեռագրային և հեռախոսային ծառայությունների վրա:

Հոդված 351. Բարձրագույն նավահանգստի վրայով ազատ մուտք դեպի Սև ծովը տրվում է Վրաստանին, Ադրբեջանին և Պարսկաստանին ճիշտ այնպես, ինչպես և Հայաստանին:

Մուտքի այս իրավունքը կիրառվի (սույն Պայմանագրի) 349-րդ հոդվածում նախատեսված պայմաններով:

Հոդված 352. Սույն Պայմանագրի 3-րդ մասի (քաղաքական դրույթներ) 89-րդ հոդվածում նախատեսված որոշման պահպանմամբ Հայաստանին Տրապիզոնի նավահանգստի վրայով տրվում է ազատ մուտք դեպի Սև ծովը. մուտքի

իրավունքը կիրառվի 349-րդ հոդվածում նախատեսված պայմաններով:

Այս դեպքում Տրապիզոնի նավահանգստում Հայաստանին առհավետ, քանի որ ժամկետը չի սահմանված Ազգերի լիգայի կողմից, վարձակալության կհանձնվի մի տեղամաս, որը կդրվի 341-344-րդ հոդվածներում նախատեսված ազատ գոտիների ընդհանուր ռեժիմի տակ, և որը նախորդված կլինի այդ պետությունից արտահանվող կամ ներմուծվող ապրանքների անմիջական տրանզիտի համար:

Նախորդ պարբերությունում նշված տեղամասի սահմանազատումը, նրա միակցումը գոյություն ունեցող երկաթուղիներին, նրա սարքավորումը, նրա շահագործման եղանակը և ընդհանրապես նրա օգտագործման բոլոր պայմանները, ներառյալ վարձավճարը, կսահմանվեն այն հանձնաժողովի կողմից, որը կազմված կլինի Հայաստանի մեկ պատգամավորից, Թուրքիայի մեկ պատգամավորից և Ազգերի լիգայի կողմից նշանակված մեկ պատգամավորից: Այս պայմանները կարող են նույն կարգով վերանայվել յուրաքանչյուր տասը տարին մեկ անգամ:

Ի վավերացումն որի, վերը հիշատակված լիգայի անդամները ստորագրեցին սույն Պայմանագիրը:

Կազմված է Սևրում հազար ինը հարյուր քսան թվականի օգոստոսի տասին միակ օրինակով, որը ի պահպանություն կմնա Ֆրանսիական Հանրապետության կառավարության արխիվներում և որի վավերացված պատճենները կհանձնվեն ստորագրող տերություններից յուրաքանչյուրին:

// Ջորջ Գրեհեմ // Ա.Ահարոնյան
// Ջորջ Խ. Պերլեյ // Ժ. Վան-Դեն-Յեյվել
// Էնդրյու Ֆիշեր // Ռոլեն Ժեկմեն
// Ջորջ Գրեհեմ // Ե.Կ. Վենիգելոս
// Ռ.Ա. Բլանկենբերգ // Ա. Ռոմանոս
// Արթուր Յիրցել // Մավրիկի Չամոյսկի
// Ա. Միլերան // Էրազմ Պիլց
// Ֆ. Ֆրանսուա Մարսել // Ալֆոնսո Կոստա
// Ժյուլ Կամբոն // Դ.Ժ. Գիկ
// Պալեոլոգ // Ստեֆան Օսուսկի
// Բոնին // Հաադի
// Մարիետտի // Դոկտոր Ռիգա Թեֆիլ
// Կ. Մացուի // Ռեշադ Խալիսո

Հայաստանի Հանրապետություն

Ինչպիսի՞ն են Օձաբերդ ուրարտական բնակավայրի պեղումների արդյունքները. Այն հիմնել է Ռուսա I-ը

«Ազգային ժողովի նախագահի տեղակալ Էդուարդ Շարմազանովի գլխավորած պատվիրակությունն օգոստոսի 29-ին այցելել է Գեղարքունիքի մարզ՝ Օձաբերդ ուրարտական բնակավայր, որտեղ իրականացվում են հնագիտական պեղումներ եւ ծանոթացել հնագիտական աշխատանքների ընթացքին:

ԱՄ-ից հայտնում են, որ «ԱՄ փոխնախագահին ուղեկցել են Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանը, ՀՀ ԱԺ առողջապահության եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հակոբ Հակոբյանը եւ համայնքների ղեկավարներ:

Հնագիտական արշավախմբի ղեկավար, պատմական գիտությունների թեկնածու Միքայել Բադալյանը ՀՀ ԱԺ պատվիրակությանը ներկայացրել է կատարված աշխատանքները, մանրամասնորեն պատմել պեղումների արդյունքները:

Միքայել Բաղայանի ղեկավարած արշավախմբի իրականացրած պեղումներն առաջին հերթին կարելուք են նրանով, որ Սեւանի հարավային ավազանում ուսումնասիրվում է ուրարտական շրջանի ամրոց, որի նվաճումը եւ վերակառուցումը կապված է քիչ ուսումնասիրված Ռուսա I-ի իշխանության ժամանակաշրջանի հետ: Սա այն եզակի հուշարձաններից մեկն է, որ հնարավորություն է ընձեռում ուսումնասիրել ուրարտական եւ հետուրարտական պատմամշակութային գործընթացները մեկ ընդհանուր տարածքում:

«ՄՓ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը, ուսումնասիրելով հնագետների կատարած պեղումները, նշել է, որ ամբողջ աշխարհում հնագիտական վայրերը դարձել են զբոսաշրջիկների նախընտրված այցելությունների վայրեր: Օձաբերդը Ռուսա I-ի հիմնած բացառիկ ամրոց է, որը հավակնում է դառնալ զբոսաշրջության կենտրոն:»

«Օձաբերդը մեր ժողովրդի մշակութային ամենահարուստ ժառանգություններից մեկն է,- նշել է Էդուարդ Շարմազանովը եւ պատրաստակամություն հայտնել օժանդակել արշավախմբին պեղումները շարունակելու եւ ավարտելու հարցում:»

«ՄՓ առողջապահության եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հակոբ Հակոբյանը լիահույս է, որ Օձաբերդ ուրարտական հնավայրը հետագայում կդառնա Գեղարքունիքի մարզի զբոսաշրջության կարելուք վայրերից մեկը:»

Արշավախմբի անդամները հետագայում նպատակ ունեն պեղել ամրոց-բնակավայրի, ինչպես նաեւ ամրոցից հարավ-արեւմուտք տեղակայված բլրի տարածքը, որի զագաթին նկատել են դամբարանների խցեր, իսկ ներքեւում՝ մինչեւ ստորոտը, պատերի հետքեր:

Ելք կա, ելքը կոմունիստական կուսակցության վերադարձն է իշխանության. Տաճատ Սարգսյան



Իրոք ելք կա, ելքը կոմունիստական կուսակցության վերադարձն է, որի օրոք կնվազի արտագաղթը, երկիրը բարվոք վիճակի կգա: Այս մասին, այսօր՝ օգոստոսի 28-ին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջնորդ Տաճատ Սարգսյանը՝ անդրադառնալով Երեւանի ավազանու. «Ելքն իմբակցության՝ փողոցների որոշ անուններ անվանափոխելու վերաբերյալ առաջարկին: «Եվ «Ելք-ին եւ մյուսն երիտասարդներին խորհուրդ կտայի այնպես անելին, որ օբյեկտիվորեն վեր հանելին երկրի

թերությունները, պակասեցնելին ժողովրդի հոգսը, կանխելին արտագաղթը: Ինչո՞ւ այդպիսի նպատակ չի դրվո՞ւմ, անուններ են ուզում փոխել,- ասաց նա:

Նրա խոսքով, իհարկե, խորհրդային տարիներին եղել են նեգատիվ երեւոյթներ, եղել է 37 թիվ, ու իրենք դատապարտել են, բայց այն հարյուր տարվա մեջ դա մեկ տարի է եղել:

Ինչ վերաբերում է Լենինգրադյան փողոցի անվանափոխությանը՝ նա ասաց. «Լենինգրադը խորհրդանիշ է Փաշխատական Գերմանիայի ձախողման. Լենինգրադում հայերի անունով փողոցներ կան: Մերունդները չպետք է հակադրվեն անուններին, մենք էլ այսօր խոնարհվում ենք արցախյան հերոսների ու նրանց անունների առաջե:»

Տաճատ Սարգսյանը զարմանք հայտնեց, որ այս խնդրի առնչությամբ իշխանության ներկայացուցիչներն ու եւ գիտնականները չեն միջամտում. «Եթե գիտական կոչում են ստացել, պարտավոր են իրականությունը ներկայացնել:»

Մահացել է ռեժիսոր Անտոն Աղայանցը



77 տարեկանում Երեւանում մահացել է ռեժիսոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Անտոն Աղայանցը: Նրա հոգեհանգիստը տեղի կունենա օգոստոսի 28-ին, ժամը 18:00-ին՝ «Լյուարե սգո սրահում (Շահումյան գերեզմանոցի հարեւանությամբ): Վերջին հրաժեշտը՝ օգոստոսի 29-ին, ժամը 13:00-ին՝ նույն վայրից:

Անտոն Աղայանցը ծնվել է Լենինգրադում: Մովորել է Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, ապա կրթությունը շարունակել Լենինգրադի թատերական արվեստի ակադեմիայի ասպիրանտուրայում: 1963թ-ից աշխատել է Հայաստանի հանրային հեռուստաընկերությունում:

Հեռուստաթատրոնում բեմադրել է Սկառնաչիի եւ Տարաբուզիի՝ «Մինյոր Պապագատտոնե, Զալանթարյանի՝ «Մովսես ապերընե, Իսանգաղյանի՝ «Զարանձավի բնակիչները, Գոլդոնիի՝ Երկու տիրոջ ծառան, Տեր-Գրիգորյանի՝ «Մեռնող ֆլորանտ եւ այլ պիեսներ:

Դասավանդել է Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտում եւ Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետում:

Նա հաղորդավար, դերասանուհի Նոննա Չոտովայի ամուսինն էր:

Խոսքովի անտառում 4 տեղամասով շուրջօրյա հերթապահություն է սահմանված. այս պահին ակտիվ օջախներ չկան



Օգոստոսի 28-ին, ժամը 10:00-ի դրությամբ Խոսքովի պետական արգելոցում հրշեջ-փրկարարների ուժերով իրականացվում է հետախուզություն, ակտիվ օջախներ չկան:

Հայաստանի ԱԻՆ-ից հայտնում են, որ չորս տեղամասով սահմանված է շուրջօրյա հերթապահություն, ներգրավված է 37 փրկարար ծառայող, 9 արգելոցի աշխատակից եւ 5 ոստիկան:

Դաղիվանքում հնագիտական պեղումներ են սկսվել



Դաղիվանքի վանական համալիրի փոքր գմբեթավոր եկեղեցու վերականգման նախագծի շրջանակներում հնագիտական պեղումների գործընթաց է սկսվել: Այս մասին Facebook-ի իր էջում գրել է Արցախի Հանրապետության նախագահի խորհրդական Տիգրան Աբրահամյանը:

«Հնագիտական պեղումների գործընթաց ենք սկսել՝ հետաքրքիր և արժեքավոր բացահայտումների սպասումով,-գրել է նա:

Մեր դիրքորոշումն անփոփոխ է. Արցախի ԱԳ նախարարը՝ Հոգվանդի հայտարարության մասին

ԱՄՆ համանախագահ Ռիչարդ Հոգվանդի կողմից հնչեցված տարրերը նորություն չեն պարունակում եւ հանդիսանում են բազմիցս հրապարակված Մադրիդյան սկզբունքների բառափոխում: Այդ մասին Արցախի հանրային

հեռուստատեսության հետ զրույցում ասել է Արցախի արտաքին գործերի նախարար Կարեն Միրզոյանը՝ մեկնաբանելով Մինսկի խմբի ԱՄՆ համանախագահ Ռիչարդ Հոգվանդի կողմից հնչեցված ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության կարգավորման տարրերը: «Մեր դիրքորոշումը այդպիսի առաջարկների վերաբերյալ հայտնի է եւ մնում է անփոփոխ: Ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության կարգավորման ցանկացած մոդել, եթե այն միտված է ապահովել կայուն եւ հարատև խաղաղություն, անհնար է առանց արցախյան կողմի լիարժեք մասնակցության բանակցային գործընթացի բոլոր փուլերին եւ չի կարող հաշվի չառնել առկա իրողությունները:



2016 թ. ապրիլի պատերազմը ակնառու կերպով ցուցադրեց, որ իրականությունից կտրված մոտեցումները վտանգավոր են, եւ կարող են ճանապարհի հարթել անկանխատեսելի զարգացումների համար:

Այսօր, նախ եւ առաջ, անհրաժեշտ է հետեւողական քայլեր ձեռնարկել խաղաղ գործընթացի անշրջելիության ապահովման եւ ձեռք բերված պայմանավորվածությունների, մասնավորապես, հրադադարի խախտումների հետաքննության մեխանիզմի իրագործման ուղղությամբ: Չիրականացված պայմանավորվածությունները կուտակվելով վերածվում են բալաստի եւ խոչընդոտում են բանակցություններում դրական տեղաշարժի հնարավորությունը,- նշել է Միրզոյանը:

Հայաստանի անկախության Հռչակագրի ընդունումը պետք է արժանավայել նշել. Պարույր Հայրիկյան



Հայաստանի անկախության Հռչակագիրը փոխյեց պետական իշխանությունը գլխավորող մարդկանց մտածելակերպը: Այս մասին օգոստոսի 23-ին հայտարարել է «Ազգային ինքնորոշումն միավորման առաջնորդ Պարույր Հայրիկյանը: Նրա խոսքով՝ դա ամենակարեւորն է ժողովրդի համար: «Հայ ժողովուրդը բոլոր ժողովուրդներից ավելի շատ էր պատրաստ անկախություն հռչակելուն: Ի տարբերություն մյուս բոլոր ժողովուրդների՝ ներառյալ Արեւելյան Եվրոպայի ժողովուրդները, հայ ժողովուրդն ուներ կայուն

կազմակերպություն, որն աշխատում էր անկախության ուղղությամբ,- նշել է Պարույր Հայրիկյանը: Նա հավելել է, որ անկախության հռչակագրի ընդունումը կարելու էր իրադարձություն էր, եւ ճիշտ կլինի այն արժանավայել նշել: Ուղիղ 27 տարի առաջ՝ 1990 թվականի օգոստոսի 23-ին, Հայկական ԽՍՀ-ն, հայտնելով հայ ժողովրդի միասնական կամքը՝ ելնելով Սարգոս իրավունքների համընդհանուր հռչակագրի եւ միջազգային օրենքի հայտնի նորմերից, իրագործելով ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը, ընդունեց Հայաստանի անկախության Հռչակագիրը:

Մահացել է Պերճ Զեյթունցյանը



Կյանքից հեռացել է ականավոր գրող, հրապարակախոս, թարգմանիչ Պերճ Զեյթունցյանը: Նա վերջերս էր բոլորել 79-րդ տարին /հուլիսի 18-ին/:

Նշենք, որ Պերճ Զեյթունցյանը ծնվել է Ալեքսանդրիայում, Եգիպտոս, 1938 թ.: 1948 թվականին հայրենադարձել է: Ավարտել է Երևանի Ղազարոս Աղայանի անվան միջնակարգ դպրոցը: 1963 թվականին ավարտել է Պյատիգորսկի օտար լեզուների ինստիտուտը: 1963-1964 թվականներին սովորել է Մոսկվայի բարձրագույն սցենարական դասընթացներում: 1965-1968 թվականներին եղել է «Հայֆիլմեկինոստուդիայի խմբագիրը, 1965-1975 թվականներին՝ հեռուստաֆիլմերի «Երևանե ստուդիայի գլխավոր խմբագիրը, 1975-1986 թվականներին՝ Հայաստանի գրողների միության քարտուղարը: 1991-1992 թվականներին եղել է ՀՀ մշակույթի առաջին նախարարը:

Առաջին գիրքը տպագրվել է 1956 թվականին: Հեղինակ է 12 պիեսների, որոնք բեմադրվել են Երևանի թատրոններում: Գրքերը թարգմանվել են 11 լեզուներով, այդ թվում՝ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, արաբերեն:

Զեյթունցյանը պետական մրցանակի կրկնակի դափնեկիր է, մշակույթի վաստակավոր գործիչ, Հռոմի արվեստների և հասարակական գիտությունների «Տիբերինաե ակադեմիայի պատվավոր անդամ:

2007 թվականին Պերճ Զեյթունցյանին հանձնվել է Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու «Սուրբ Մահակ-Սուրբ Մեսրոպե պատվո բարձր շքանշան: Դրանից մի քանի տարի առաջ էլ արժանացել է «Հայ արվեստի ասպետե, ինչպես նաև «Երևանի պատվավոր քաղաքացիե կոչումներին: 2013 թ. ՀՀ Վարչապետի որոշմամբ պարգևատրվել է ՀՀ վարչապետի հուշամեդալով: 2016 թվականին ՀՀ Անկախության 25-ամյակի առթիվ, հայ գրականության և մշակույթի զարգացման գործում ներդրած մեծ ավանդի համար պարգևատրվել է Պատվո շքանշանով:

Նրա գործերից են «Մեր թաղի ձայները», «Մեզնից հետո», «Փարիզի համար», «Ամենատխուր մարդը», «Վերջին արևազարդ», «Ոտքի, դատարանն է գալիս», «Հիսուս Նազովրեցին և իր երկրորդ աշակերտը: Խոր Վիրապե... Նրա կատարած թարգմանություններից են Էրսբին Քոլլուելի «Տաք գետը», Գրեհեմ Գրեհեմի «Խաղաղ ամերիկացին», Էռնեստ Հեմինգուեյի «Կլիմանջարոյի ձյունները և «Հրաժեշտ գեներին ստեղծագործությունները:

Հայաստանը միակ երկիրն է աշխարհում, որտեղ զարգանում է եզդիական մշակույթը. Թամոյան



Հայաստանը միակ երկիրն է աշխարհում, որտեղ զարգանում է եզդիական մշակույթը: Այս մասին օգոստոսի 17-ին մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է Հայաստանի եւ աշխարհի եզդիների միության նախագահ Ազիզ Թամոյանը: Եզդիների միության նախագահը հիշեցրեց, որ Հայաստանում գործում են եզդիների համար նախատեսված դպրոցներ, պետական մակարդակով դասագրքեր են հրատարակվում, ռադիոհաղորդում է թարգմանվում: «Եթե աշխարհում եզդիներ չմնան, Հայաստանում նրանք կապրեն ու կզարգանան,- հայտարարեց Ազիզ Թամոյանը:

«Խոսքովի անտառե-ում հրդեհը կանխատեսելի էր. բնապահպան



Խոշոր հրդեհներ, ինչպես «Խոսքովի անտառե-ում, տեղի են ունենում ամբողջ աշխարհում: Այս մասին օգոստոսի 17-ին մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց բնապահպան Միլվա Աղամյանը:

Նրա խոսքով՝ առաջին պատճառը կլիմայական փոփոխություններ են: «Օդերևութաբանական ծառայությունը մշտապես զգուշացնում էր ուժեղ շոգի մասին-հիշեցրեց բնապահպանը՝ հավելելով, որ շոգի պայմաններում հրդեհը միանգամայն կանխատեսելի էր: Ըստ Աղամյանի՝ հրդեհը հանգցնելու համար ԱԻՆ-ի տեխնիկական բավարար չէր. «Իմ տեղեկություններով՝ հողի փոխարեն ուղղաթիռից ցեմենտ էին նետում, ինչը բացառապես անթույլատրելի է:

«Փաստացի պարզվեց, որ մենք ավիացիոն տեխնիկա չունենք, - հայտարարեց Ադամյանը՝ տխրությամբ արձանագրելով, որ նույնիսկ Ադրբեջանը նման տեխնիկա ունի: «Երկրի անվտանգության համար պետք չէ գումար խնայելե-ասաց բնապահպանը՝ հավելելով, որ առանց ռուսական կողմի օգնության չէր հաջողվի ինքնուրույն հանգցնել հրդեհը:

Բնապահպանը նշեց մի շարք խնդիրներ, որոնք հանգեցրեցին աղետին: Բացի կլիմայակա փոփոխություններից՝ պատճառը երկրի լանդշաֆտի փոփոխությունն է, ծառերը կտրելը: Իսկ արգելոցում խարույկներ վառելու մասին բնապահպանը կոչ արեց չխոսել՝ այն հրդեհի համար այնքան էլ հավանական պատճառ չհամարելով:

Նրա խոսքով հիմնականում տուժել են սողուններն ու միջատները. «Իսկ նրանց թիվը հարյուրների է հասնում: Դրական լուրն այն է, որ թռչուններին եւ խոշոր կենդանիներին, ամենայն հավանականությամբ, հաջողվել է փրկվել: Ադամյանը հավելեց, որ արգելոցը վերականգնելու համար անհրաժեշտ կլինեն տասնյակ, եթե ոչ հարյուրավոր տարիներ:

Մահացել է Էդուարդ Հովհաննիսյանը



Օգոստոսի 2-ին մահացել է «Արիւնես ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպության նախագահ Էդուարդ Հովհաննիսյանը: 78-ամյա Էդուարդ Հովհաննիսյանը մահացել է ինֆարկտից:

Արևմտյան Հայաստան

Թուրքիայի միակ հայկական գյուղի մասին ֆիլմը թարգմանվում է թուրքերեն



Ամերիկացի գրող Կարոլին Թրենթոն Գյուրբուզի եւ Թուրքիայից ֆոտոթղթակից Սաիթ Սեդրբան Գյուրբուզի

կողմից դեռևս 2012-ին Թուրքիայի միակ հայկական գյուղի մասին պատմող ֆիլմը թարգմանվում է թուրքերեն:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոսե-ը, Անկարայում ԱՄ դեսպանատան հովանավորությամբ պատրաստված «Փոքրացող համայնք. Վազրֆ» Թուրքիայի վերջին հայկական գյուղե վերնագրի ներքո վավերագրական ֆիլմում ներկայացված են 22 կենսագրական հատված, 6 լուսանկարի պատմություն եւ երկու կարճ տեսագրություններ: Մինչ այժմ ֆիլմն անվերենով հնարավոր է դիտել vakifli.com կայքում:

Նշենք, որ Վազրֆ գյուղը Կիլիկիայի Սուեոխայի շրջանի 6 գյուղերից մեկն է, որոնց բնակիչներ հանդիսացել են հերոսական Սուսալեռան հերոսամարտի մասնակիցները: 1939-ին Ֆրանսիան Ալեքսանդրեթի սանջակը հանձնեց Թուրքիային: Վազրֆը հանդիսանում է Թուրքիայի վերջին ու միակ հայաբնակ գյուղը:

Հայ ես, տատի. թուրք ոստիկանները տարեց քուրդ կնոջ տանը Աստվածաշունչ են տեսել եւ կատաղել



Դիարբեքի քրդաբնակ Հազրոյի շրջանում ապրող 76-ամյա տարեց կինը բողոքել է ոստիկանների կողմից մշտական ճնշումների ենթարկվելու համար:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոսե-ը, տարեց կնոջ թոռները ահազանգել են խմբագրություն, որ իրենց տատին ենթարկվում է ոստիկանների ու զինվորականների ճնշումներին: Նրանք շեշտել են, որ ամիսներ առաջ թուրքական ոստիկանությունն ու զինվորականները Հազրոյի շրջանում հատուկ գործողություն են սկսել, որի ժամանակ խուզարկել են իրենց 76-ամյա տատի տունը:

«Խուզարկության ժամանակ Աստվածաշունչ են գտել եւ տատիին հարցրել, նրա հայ լինելու մասին: Տատին շեշտել է, որ ինքը մահմեդական է եւ մշտապես Ղուրան է կարդում, սակայն երբեմն թերթում է Աստվածաշունչը: Դրանից հետո ոստիկանների հետ ինչ-որ անձիք են եկել, ովքեր սկսել են տատիի հետ հայերեն խոսել՝ փորձելով իբր բացահայտել ծպտյալ հայիե,-նշել են թոռները:

Թուրքիայի ազգային հերոս հայի հոգեհանգիստը հայկական եկեղեցում են արել



Ստամբուլի հայկական Սուրբ Աստվածածին եկեղեցում տեղի է ունեցել թուրքական զորքերի կազմում Կիպրոսում զործողությունների մասնակցած եւ «Կիպրոսի հերոսե կոչումը ստացած Մուրադ Միհրանի հոգեհանգիստը:

Թուրքական Yenikapihaber կայքի փոխանցմամբ՝ Մուրադ Միհրանի թաղման արարողությունը կազմակերպվել է ամբողջովին զինվորական կարգով, որին մասնակցել են պատվի պահակախմբի զինվորականներ եւ բարձրաստիճան զինվորականներ:

Մուրադ Միհրանի դագաղը եկեղեցի է բերվել պատվո պահակախմբի զինվորների կողմից, որից հետո հայ հոգեւորականները հոգեհանգստի արարողություն են անցկացրել:

Այնուհետ Մուրադ Միհրանի դագաղը տեղափոխել են Բայրըքլի հայկական գերեզմանոց, որտեղ էլ ամփոփել են մարմինը:

64-ամյա Մուրադ Միհրանը 1974-ին մասնակցել է Կիպրոսում թուրքական կողմի զործողություններին եւ ստացել «Կիպրոսի հերոսե կոչումը: Այնուհետ նա Ստամբուլի «Փակ շուկայում» ոսկու տաղավարներ է բացել եւ մինչ օրս որպես հաջողակ եւ սիրված ոսկերիչ է եղել:

Ադանայում ոստիկանները 3 մլն եվրոյով վաճառվող սրբապատկեր են բռնագրավել



Թուրքիայի Ադանայի Սեյհանի շրջանում ոստիկանները ահազանգի հիման վրա պատմական մեծ արժեք ներկայացնող սրբապատկեր են բռնագրավել:


Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ Ադանայի ոստիկանությունը ահազանգի հիման վրա իրականացրած ուսումնասիրության ընթացքում պարզել է, որ Սեյհանի շրջանի տներից մեկում պատմական արժեք

ներկայացնող, 1000 տարվա հնություն ունեցող սրբապատկեր է վաճառվում 3 մլն եվրոյով:

Գործողություն սկսած ոստիկանները նշված տնից հայտնաբերել են 1,4 մետր երկարությամբ եւ 80 սմ լայնությամբ Քրիստոսի պատկերով սրբապատկեր: Հնագետները դժվարացել են նշել հայտնաբերված սրբապատկերի զինը՝ շեշտելով, որ այն խիստ թանկարժեք սրբապատկեր է:

Սրբապատկերը վաճառելու կասկածանքով ձերբակալվածը պնդել է, թե այն իր ավագ եղբորից է մնացել իրեն:

Թուրքիայում լքված հայկական եկեղեցի է վերանորոգվելու



Թուրքիայի Քոնիա նահանգի Աքշեհիրի շրջանում գտնվող հայկական եկեղեցիներից մեկը վերանորոգվելու է:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոսե-ը, Աքշեհիրի քաղաքապետարանը եւ Չարգացման նախարարությունը օրեր առաջ Աքշեհիրում հայկական եկեղեցու դիմաց համաձայնագիր են ստորագրել, որի համաձայն Չարգացման նախարարությունը ֆինանսավորելու Աքշեհիրի շրջանում «Նասրեդին Հոջայի գյուղե նախագիծը, որի մեջ է մտնելու նաեւ հայկական եկեղեցու վերանորոգումը:

Նշվում է, որ հայկական եկեղեցին վերանորոգվելուց հետո մշակույթային կենտրոն է դառնալու:

Աքշեհիրի քաղաքապետը նշել է, թե եկեղեցու վերանորոգմանը զուգահեռ կվերանորոգվի նաեւ հարեւանությամբ գտնվող նախկին քահանայի տունը, որը կվերածվի բուսիկ հյուրանոցի:

Ըստ հայտնի պատմաբան Ռայմոնդ Գեւորգյանի՝ մինչ 1915-ը Աքշեհիրի շրջանում 5 հազար հայ է բնակվել: Այդ ժամանակ շրջանում գործել է հայկական Սուրբ Երրորդություն եկեղեցին:

Թուրքական Kanal D-ով հայ ռեժիսորի ֆիլմի ցուցադրությունը բողոքի ալիք է բարձրացրել. Արարատն ու

Վանա լիճը Հայաստանի մի մաս

Թուրքական ռեյթինգային Kanal D հեռուստաալիքով հայ հայտնի ռեժիսոր Սարի Անդրեասյանի «Պաշտպաններ» ֆիլմը բողոքի մեծ ալիք է բարձրացրել մամուլում եւ սոցկայքերում:

Ֆիլմում Արարատ լեռն ու Վանա լիճը ներկայացվում են Հայաստանի մաս, որն էլ խիստ վրդովեցրել է թուրքերին:

Ֆիլմի հետ կապված քննադատական հոդված է հրապարակել Aydinlik պարբերականը: Իսկ սոցկայքերում հիմնականում հետեյալ բովանդակությամբ մեկնաբանություններ են, որ չի կարելի Թուրքիայի տարածքային ամբողջականությունը չճանաչող ֆիլմ ցուցադրել հենց թուրքական հեռուստատալիքով:

Թուրքիայի Գնալը կղզու Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում ցուցահանդես է բացվել



CUMA, CUMARTESİ, PAZAR

Պոլսոս պատրիարքական տեղապահ Տեր Գարեգին արքեպիսկոպոս Բեկչյանի օրհնությամբ, օգոստոսի 17-ին ժամը 21.00-ին, Գնալը Կղզու Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցում տեղի է ունեցել «Cuma, Cumartesi, Pazartesi» խորագրով լուսանկարչական ցուցահանդես բացումը:

Պոլսոս պատրիարքարանից հայտնում են, որ ցուցահանդեսին մասնակցել են 5 լուսանկարիչների աշխատանքներ, որոնց շարքում են նաև համայնքի անդամներից Մկրտիչ Արծիվյանը և Բերբե Արաբյանը: Այն կազմակերպվել է եկեղեցու հոգևոր հովիի և թաղային խորհրդի ջանքերով:

«Մուտքն ազատ է, մշակութասեր հասարակությունը կհամախմբվի Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցում և երաշխիքը կդառնա տարբեր հավատքների եղբայրական համակցությանն,-ասված է հաղորդագրության մեջ:

Աղթամարում 2 տարվա դադարից հետո պատարա՛գ կմատուցվի. հայկական համայնքը դեռ երկմտանքի մեջ է



Չի բացառվում, որ Թուրքիայի իշխանությունները թույլ տան հայերին սեպտեմբերին պատարագ մատուցել Աղթամար կղզու հայկական եկեղեցում:

Թուրքիայի կառավարության միջոցներով Աղթամարի Սուրբ Խաչը 2007թ.-ին վերանորոգվել է և բացվել է այցելությունների համար որպես թանգարան: Այնուհետ

Պոլսոս Հայոց պատրիարքարանը դիմել էր Թուրքիայի կառավարությանը՝ Աղթամարի Սուրբ Խաչում տարին մեկ անգամ պատարագ իրականացնելու թույլտվություն ստանալու համար: 2010-ի մարտին Թուրքիայի մշակույթի նախարար Էրթուրողլ Գյունայր հայտարարեց, թե արդեն կա Սուրբ Խաչում պատարագ իրականացնելու և եկեղեցու գմբեթին խաչ տեղադրելու թույլտվությունը: Պատարագի անցկացման օր նշանակվեց սեպտեմբերի երկրորդ կիրակի:



Վերջին անգամ այստեղ պատարագ մատուցվել է 2014թ-ին: Պոլսոս հայոց պատրիարքարանն արդեն 2015թ.-ին որոշում կայացրեց Վանի Սուրբ Խաչ եկեղեցու պատարագը, ահաբեկչական հարձակումները հաշվի առնելով, չեղյալ հայտարարել: Դրանից հետո էլ արդեն Թուրքիայի իշխանությունները դադարեցրին կրոնական ծիսակատարություններն Աղթամարի հայկական եկեղեցում: Այս խնդրին իր «Աշխարհում կրոնի ազատությանն նոր զեկույցում անդրադարձել էր նաև ԱՄՆ պետքարտուղարությունը:



«Վերջին երկու տարում սեպտեմբերին այնտեղ պատարագ չի մատուցվում Սուրբ Խաչի տոնին նվիրված: Այդ տարածքում բավականին լարված իրավիճակ է, իշխանություններն ասել են, որ կարող են այս տարի թույլատրել այդ ծիսակատարությունն անցկացնել, բայց չեմ կարող ասել՝ կանցկացվի պատարագը, թե ոչ: Եթե նույնիսկ արտոնեն պատարագն անցկացնել, դժվար է այնտեղ հասնելը: Քաղաքապետերը բանտարկված են, նրանց փոխարեն նշանակված են պաշտոնական պաշտոնյաները, ճիշտն ասած, նաև լարված իրավիճակ է, պատերազմական դրություն է կարելի ասել: Պատմական Հայաստանի քաղաքներում փառատոններ էլ էին անցկացվում, բայց հիմա դրանք էլ չեն անցկացվում՝ հաշվի առնելով թուրք-քրդական լարված հարաբերությունները», անդրադառնալով խնդրին, նշեց «Ակոսե պարբերականի հայկական բաժնի խմբագիր Բագրատ Էստուկյանը:

Հիշեցնենք, որ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին 915-921 թվականներին կառուցվել է Վասպուրականի իշխան Գագիկ Արծրունու պատվերով՝ ճարտարապետ, քանդակագործ և նկարիչ Մանվելի կողմից: Տանարի արտաքին պատերը

գարդարված են 6 հորիզոնական շարք կազմող գարդաքանդակներով, որոնք չեն խախտում պատերի հարթությունը: Չարդաքանդակները ստեղծելիս Մանվելը հաշվի է առել հնարավոր դիտանկյունները և տարբեր ժամերի լուսավորությունը: Պատերից մեկի վրա Գագիկ Արծրունու դիմաքանդակն է, կողքին՝ ողջ հասակով Զրիստոսը, որին արքան պարգում է եկեղեցու մանրակերտը:

Տխրեցի, որ մեր նախնիների մնացորդներին անգամ չկարողացանք տեր կանգնել. Փայլանն այցելել է Վանի հայկական գերեզմանոց



Թուրքիայի քրդական «Ժողովուրդների դեմոկրատական» (ՀԴԲ) կուսակցության հայ պատգամավոր Կարո Փայլանն այցելել է Վան ստուգելու այն պնդումները, թե Վանում գտնվող պատմական «Դիլքայա Հյոյուքե-ում» եւ հայկական գերեզմանոցում գուգարան են կառուցել:

Ստամբուլում լույս տեսնող «Ակրա» թերթի փոխանցմամբ, այդ տարածքը շրջափակված է եղել փշալարերով: Փայլանը գրուցել է տարածքի բնակիչների հետ, որից հետո նշել է. «Ուր ձեռքս տարա՝ մարդու ոսկոր դուրս եկավ: Այլեւս որեւէ կասկած չունեմ, որ այս տարածքը հայկական գերեզմանոց է եղել:

«Ակոսիե հետ գրույցում հայ պատգամավորը նշել է, որ այդ տարածքը Ուրարտական ժամանակներից մնացած բնակավայր է եղել. «Այդ ժամանակներից ի վեր հայերն այնտեղ բնակություն են հաստատել: Ում հետ խոսեցի, բոլորը պատմում էին եկեղեցիների ու դպրոցների մասին, սակայն դժբախտաբար այդ հիշողությունը ջնջվել է:

Փայլանն ընդգծել է, որ տեղացիներն ասում էին, որ այս հայկական գերեզմանոցի գերեզմանաքարերը 1940-50-ական թվականներին ոչնչացվել են: «Այս գերեզմանոցի շրջանում մահմեդական մատուռ, գուգարան եւ սրճարան է կառուցվել: Տխրեցի, որ մեր նախնիների մնացորդներին անգամ չկարողացանք տեր կանգնել:

«Ակոսիե փոխանցմամբ, Վանի Էդրեմիթի (հայկական Արտամետ) շրջանի Դիլքայա թաղամասում ծնվել մեծացել է Արշիլ Գորկին, նրա տն կողքը կառուցված եւ ժամանակի ընթացքում ոչնչացված աղբյուրը 2015-ին վերականգնվել է եւ Էդրեմիթի քաղաքապետարանի կողմից այդ մասին վկայող ցուցանակ է դրվել, բայց ըստ Փայլանի, այդ աղբյուրի եւ հայ համայնքի մասին պատմող ցուցանակը հանվել է, աղբյուրի ջուրն էլ կտրել են: Ըստ Փայլանի, հայկական կյանքի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը ոչնչացվել են:

Թուրքիայում հայկական եկեղեցական սեփականության խնդիրը նշված է ԱՄՆ Պետդեպի զեկույցում



Աշխարհի բնակչության երկու երրորդից ավելին գրկված է կրոնի ազատության իրավունքից, օգոստոսի 15-ին, հայտարարել է ԱՄՆ-ի պետքարտուղար Ռեքս Թիլերսոնը, ներկայացնելով Աշխարհում կրոնի ազատության նոր զեկույցը:

«Աշխարհի բնակչության գրեթե 80 տոկոսն ապրում են իրենց կրոնի ազատության սահմանափակման կամ դրա դեմ ուղղված թշնամական գործողությունների պայմաններում, - նշել է նա, հաղորդում է «[Ամերիկայի ձայնը](#)»:

Պետքարտուղարի խոսքով, կրոնի ազատության հետ կապված առավել բարդ է իրավիճակը Դաշի ահաբեկիչների վերահսկողության տակ եղած տարածքներում, որտեղ եզրինները եւ քրիստոնյաները լավագույն դեպքում հատուկ հարկ են վճարում, սակայն հաճախ՝ սպանվում, բռնաբարվում կամ վաճառվում որպես ստրուկներ: Լուրջ խնդիրներ կան նաեւ Սաուդյան Արաբիայում, Չինաստանում, Պակիստանում, Մուղանում, Իրանում եւ Թուրքիայում, նշում է պետքարտուղար Թիլերսոնը.

«Թուրքիայում իշխանությունները շարունակում են սահմանափակել որոշ կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչների մարդու իրավունքները, իսկ որոշ համայնքներում շարունակվում են կրոնական սեփականության շուրջ վեճերը:

Մասնավորապես, զեկույցում նշված է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հայցը, որը պահանջում է վերադարձնել 1915 թվականին ապօրինի կերպով գրավված Կաթողիկոսի նստավայրը Սիսում: 2016-ի հունիսին Թուրքիայի Սահմանադրական դատարանը մերժել էր հայցն ընթացակարգային պատճառներով, սակայն, դեկտեմբերին հայցվորը դիմել էր Մարդու իրավունքների Եվրոպական դատարան: Չեկույցը հիշատակում է նաեւ, որ Թուրքիայի իշխանությունները դադարեցրել են կրոնական ծիսակատարություններն Ախթամար կղզու հայկական եկեղեցում:

Ադրբեջանում 2016-ին ձերբակալվել է կրոնական 86 առաջնորդ, որոնց տեղական դիտորդները քաղաքանտարկյալ են համարում: Պետքարտուղարությունն ընդգծում է, որ առավել բարդ է ոչ ավանդական կրոնական խմբերի վիճակը, որոնք փաստորեն գրկված են ազատ հավաքվելու իրավունքից: «Իշխանությունները շարունակում են փակել կրոնական հաստատություններ եւ խափանել կրոնական ծառայությունները, - նշում է Պետքարտուղարությունը:

Հայաստանում մտքի, խղճի եւ կրոնի ազատությունն ապահովված է Մահմանադրությամբ, նշված է գեկույցում, իսկ Հայ Առաքելական Եկեղեցին հռչակված է Հայաստանի ազգային եկեղեցի եւ ազգային ինքնության պահպանման: Կրոնի ազատության դեմ ուղղված միջադեպերը Հայաստանում, հարեւանների համեմատ, հազվադեպ են, սակայն՝ գոյություն ունեն: Մասնավորապես, գեկույցը նշում է 2016-ի հոկտեմբերի 2-ին Վանաձորի ավետարանական եկեղեցու քահանայի դեմ բռնությունները եւ Եհովայի վկաների դեմ ճնշման 17 դեպքերը:

Եհովայի վկաների դեմ 11 բռնության դեպք էր գրանցվել 2016-ին Վրաստանում, որտեղ, գեկույցի գնահատմամբ, ոչ ավանդական կրոնական խմբերն ընկալվում են որպես ազգային ինքնության պահպանման վտանգ:

Տարածաշրջանում առավել բարդ է կրոնի ազատության հետ կապված իրավիճակը Իրանում, որտեղ քրիստոնյաները, բահայի հավատքի եւ այլ կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչները հալածանքների են ենթարկվում:

«Իրանը շարունակում է իր քաղաքացիներին մահվան դատապարտել մշուշոտ հավատորացության մեղադրանքներով. 2016-ին 20 մարդ մահապատժի է ենթարկվել «Աստծո դեմ պատերազմ վարելու» մեղադրանքով, - նշել է Թիլերսոնը:

Միացյալ Նահանգների պետքարտուղարը հիշեցրել է, որ կրոնի ազատության սահմանափակումը ծայրահեղականություն եւ կրոնական արմատականություն ծնող հիմնական պատճառներից մեկն է:

Պոլստ հայոց պատրիարքի ընտրությունը նախատեսվում է դեկտեմբերի 13-ին անցկացնել



Պոլստ հայոց պատրիարքի ընտրության հարցով կազմավորված նախաձեռնող խումբը Ստամբուլի նահանգապետարան է հանձնել պատրիարքի ընտրության օրվա առաջարկի հետ կապված դրմունք:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոսե-ը, Պոլստ հայոց պատրիարքի տեղապահ արք.Գարեթին Բեքչյանի ստորագրությամբ նախաձեռնող խմբի կողմից Ստամբուլի նահանգապետարան հանձնված դիմումում պատրիարքի ընտրության օր է առաջարկվում դեկտեմբերի 13-ը: Դիմումում նշվել է, որ անհրաժեշտ է արդեն դեկտեմբերի 10-ին անցկացնել պատվիրակների ընտրությունը:

Թուրքիայում հայկական գերեզմանի վրա զուգարան կառուցելու հարցը խորհրդարան է տեղափոխվել



Վանա լճի ափին հանգստի գոտի ստեղծելու ժամանակ հայկական գերեզմանի վրա զուգարան եւ հանդերձարան կառուցելու հարցը ընդդիմադիր «Ժողովրդահնարապետական» (CHP) եւ քրդական «Ժողովուրդների դեմոկրատական» (HDP) կուսակցության մի շարք պատգամավորներ տեղափոխել են խորհրդարան:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոսե-ը, HDP-ի եւ CHP-ի պատգամավորները գրավոր հարցադրում են ուղղել Տուրիզմի եւ մշակույթի նախարարին՝ պարզաբանում պահանջելով Վանի Արտամեղում կառուցված լողափին հայկական գերեզմանի վրա զուգարան եւ հանդերձարան կառուցելու հետ կապված: Նշենք, որ օրեր առաջ թուրքական մամուլում տեղեկություն էր հայտվել, որ Վանի Արտամեղի շրջանում Անկարայի կողմից Վանի եւ Արտամեղի ժամանակավոր քաղաապետերը հանրային լողափում հայկական գերեզմանի վրա զուգարան եւ հանդերձարան են կառուցել:

Թուրքական իշխանությունները սառեցրել են Սեւան Նիշանյանի բանկային հաշիվը



Ստամբուլահայ հայտնի լեզվաբան Սեւան Նիշանյանը սոցկայքերում նոր գրառում է կատարել:

Սեւան Նիշանյանը գրել է, թե թուրքական իշխանությունները որեւէ բան գտնել չկարողանալով՝ սառեցրել են իր բանկային հաշիվը: «Մի բանկային հաշվում սեւ օրերի համար 12 հազար լիրա ունեի: Ոչինչ չգտնելով՝ դա են սառեցրել: Ոչ թե պետություն է, այլ հանցախումբ,-գրել է Սեւան Նիշանյանը:

Նշենք, որ Սեւան Նիշանյանը թուրքական բանտից արձակուրդ էր գնացել եւ չէր վերադարձել: Ավելի ուշ հայտնի էր դարձել, որ հունական իշխանությունները նրան ժամանակավոր բնակության իրավունք են տվել:

Հիշեցնենք, որ Մեւան Նիշանյանը թուրքական դատարանների կողմից 11 տարվա ազատազրկման էր դատապարտվել ապօրինի շինարարության համար: Նիշանյանը միշտ բացահայտ խոսել է Հայոց ցեղասպանության մասին ու աչքի ընկել իր անվախ դիրքորոշումով:

Փորձագետ. Թուրքիայում հայերը խնդիրներ ունեն նույնիսկ մահից հետո



Թուրքիայում հայերի ու առհասարակ բոլոր քրիստոնյաների մոտ խնդիրներ են առաջանում ոչ միայն կենդանության օրոք, այլև մահից հետո: Այս մասին լրագրողների հետ զրույցի ժամանակ օգոստոսի 5-ին հայտնել է «Արեւմտահայկական ազգային կոնգրեսի կազմակերպության մասնակից, «Վերադարձն հիմնադրամի նախագահ Արագած Ախոյանը:

Ախոյանը պարզաբանել է, որ Թուրքիայում սկսվել է դատավարություն Մուշ քաղաքում հին հայկական գերեզմանի ճակատագրի վերաբերյալ, որտեղ թաղված է հայ ժողովրդի ազգային հերոս, ֆիդայի Գեւորգ Չավուշը: «Չկան մեխանիզմներ, որոնք կկարգավորեն գերեզմանոցը հայկական կողմին փոխանցելը: Գլխավոր խնդիրն այն է, որ մարդկանց, նույնիսկ մահից հետո, անհնար է հողին հանձնել, քանի որ եթե հանգուցյալը հայ է կամ պարզապես քրիստոնյա, նրա ազգականներին տեղ չեն հատկացնում մահմեդական գերեզմանոցում՝ հանգուցյալին թաղելու համարե,- նշեց «Վերադարձն հիմնադրամի նախագահը:

Սկանդալ. Թուրքիայում հայտնի հայկական վանքը հանձնել են գյուղի մուսուլման բնակիչներին



Ներկայում Թուրքիայի տարածքում գտնվող Երզնկա նահանգի Կամախի շրջանի Թորթան գյուղում գտնվող

Սուրբ Տրդատ վանքը սեփականաշնորհվել է գյուղի 16 բնակիչների անունով:

Թուրքական Aktifhaber կայքի փոխանցմամբ՝ Սուրբ Տրդատ վանական համալիրի սեփականաշնորհման հետ կապված Թուրքիայի հայկական միություններից մեկի նախագահ Ազիզ Դադջըն հայտարարել է, թե անթույլատրելի է, որ եկեղեցին հանձնվել է բնակիչներին: «2005 թվականից եկեղեցին որպես պատմամշակութային շինություն է որակվել, որից հետո այն մշտապես ենթարկվել է գանձագողերի հարձակումներին: Այդ հարձակումների դեմն առնելու համար վանական համալիրը 2017-ի մայիսի 23-ին գրանցել էին գյուղի 3 բնակչի անունով, սակայն նրանց մահից հետո եկեղեցին հանձնել են 16 բնակչի: Այսինքն, եթե հիմա հայ համայնքը ցանկանա պատարագ կամ այլ արարողություն իրականացնել, պետք է գյուղի այդ 16 բնակչից թույլտվություն ստանա,-ասել է Ազիզ Դադջըն՝ շեշտելով, որ սրանով պետությունը խախտում է ազգային փոքրամասնությունների իրավունքների ու կրոնի հետ կապված Լոզանի պայմանագրի դրույթները:

Ազիզ Դադջըն նշել է, թե կանգ չի առնելու եւ այս հարցով դատական հայց է ներկայացնելու պետության եւ գյուղի բնակիչների դեմ:

Նշենք, որ Սուրբ Տրդատ վանական համալիրի տարածքում գտնվող եկեղեցիներում եղել են 9 սրբերի մատույնները, այդ թվում Տրդատ թագավորի եւ Գրիգոր Լուսավորչի:

Թուրքիայի Իզմիրում հայերը 95 տարի անց առաջին պատարագն են իրականացնելու




Իզմիրի (Չմյուռնիս) Սուրբ Հովհաննես եկեղեցում օգոստոսի 14-ին Աստվածածնի Վերափոխման տոնին նվիրված պատարագի են մասնակցելու կաթոլիկ հայերը:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոսե-ը, Իզմիրի Սուրբ Հովհաննես եկեղեցում 95 տարի անց առաջին պատարագը մատուցելու է Ստամբուլի Սուրբ Հովհաննես Ոսկեբերան կաթոլիկ եկեղեցու հոգևոր առաջնորդ Վարդան Կազանջյանը:

